Ձև 1
Հայաստանի Հանրապետության
բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավարի
2018 թվականի հունվարի 23-ի
N 22-Ա հրամանի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում իրականացված միջոցառումների ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ (աճողական)

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ

(հազար դրամ)

Ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումը	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների NN	Պետության կողմից տրվող հատկացումների հաշվին ստացվող եկամուտների և իրականացվող ծախսերի			Դարձաբանումներ և բացատրություններ ծախսման նպատակի վերաբերյալ
		Հաստատված նախահաշվի ցուցանիշները	Փաստացի կատարողականը	Գերածախս կամ թերիրացում (փակագծերում գերածախս, դրական նշանով թերիրացում)	
1	2	3	4	5=3-4	6
Ա. ՄԻՋՈՑՆԵՐԻ՝ ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ		**0.0**	**0.0**	**0.0**	
Բ. ԴԻՏԱՐԿՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՍՏԱՑՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ (տող1+տող2+տող3)		**73964.8**	**73964.8**	**0.0**	
այդ թվում՝					
1. Դրամաշնորհներ ընդամենը,		**73964.8**	**73964.8**	**0.0**	
որից՝					
1.1. Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ				0.0	
1.2.Դրամաշնորհներ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից		73964.8	73964.8	0.0	
2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացվող սուբսիդիաներ				**0.0**	
3. Այլ եկամուտներ,		**0.0**	**0.0**	**0.0**	
որից՝					
3.1. Կազմակերպության հաշվեկշռում հաշվառվող գույքի (բացառությամբ հողի) վարձակալությունից				0.0	
3.2. Կազմակերպության տնօրինմանը հանձնված հողի վարձակալությունից				0.0	

1	2	3	4	5=3-4	6
3.3.Եկամուտներ ապրանքների մատակարարումից և/կամ ծառայությունների մատուցումից ընդամենը, այդ թվում՝		0.0	0.0	0.0	
- ծառայությունների մատուցումից				0.0	
- ապրանքների մատակարարումից կամ իրացումից				0.0	
- այլ եկամուտներ				0.0	
Գ. ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող Ա+տող Բ)	x	73964.8	73964.8	0.0	
Դ.ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող1+տող2+տող3)՝ այդ թվում՝	x	73964.8	80608.3	(6643.5)	
Դ1.Կազմակերպության աշխատողների ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ՝ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում՝	x	61637.3	67173.6	(5536.3)	
Դ1.1 Աշխատանքի վարձատրություն	x	61637.3	67173.6	(5536.3)	
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	61637.3	67173.6	(5536.3)	
-Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112			0.0	
Դ2. Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	x	0.0	0.0	0.0	
Դ2.1. Շարունակական ծախսեր		0.0	0.0	0.0	
-գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	4211			0.0	
-Էներգետիկ ծառայություններ	4212			0.0	
-Կոմունալ ծառայություններ	4213			0.0	
-Կապի ծառայություններ	4214			0.0	
-Ապահովագրական ծախսեր	4215			0.0	
-Գույքի և սարքավորումների վարձակալություն	4216			0.0	
-Այլ ծախսեր	4217			0.0	
Դ2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր	x	0.0	0.0	0.0	
-Ներքին գործուղումներ	4221			0.0	
-Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	4222			0.0	
-Այլ (գործուղման հետ կապված) տրանսպորտային ծախսեր	4229			0.0	
Դ2.3. Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում	x	0.0	0.0	0.0	
-Վարչական ծառայություններ	4231			0.0	
-Համակարգչային ծառայություններ	4232			0.0	
-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	4233			0.0	
-Տեղակատվական ծառայություններ	4234			0.0	
-Կառավարչական ծառայություններ	4235			0.0	
- Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	4236			0.0	
-Ներկայացուցչական ծախսեր	4237			0.0	
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239			0.0	
Դ2.4. Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերում	x	0.0	0.0	0.0	
-Մասնագիտական ծառայություններ	4241			0.0	

1	2	3	4	5=3-4	6
Դ2.5. Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	**x**	**0.0**	**0.0**	**0.0**	
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251			0.0	
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4252			0.0	
Դ2.6. Նյութեր	**x**	**0.0**	**0.0**	**0.0**	
-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261			0.0	
-Գյուղատնտեսական ապրանքներ	4262			0.0	
-Վերապատրաստման և ուսուցման նյութեր	4263			0.0	
-Տրանսպորտային նյութեր	4264			0.0	
-Շրջակա միջավայրի պաշտպանության և գիտական նյութեր	4265			0.0	
-Առողջապահական և լաբորատոր նյութեր	4266			0.0	
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր	4267			0.0	
-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269			0.0	
Դ3. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	**x**	**12327.5**	**13434.7**	**(1107.2)**	
Դ3.1 Նվիրատվություններ ոչ կառավարչական (հասարարական) կազմակերպություններին	**x**			**0.0**	
Դ3.2 Բյուջեներ կատարվող վճարումներ	**x**	**12327.5**	**13434.7**	**(1107.2)**	
Դ3.2.1.Հայաստանի Հանրապետության պետական բյուջե		12327.5	13434.7	(1107.2)	
այդ թվում					
-Հարկեր ընդամենը, այդ թվում՝	**4822**	***12327.5***	***13434.7***	***(1107.2)***	
ԱԱՀ	x	12327.5	13434.7	(1107.2)	
Շահութահարկ	x			0.0	
նշել ըստ տեսակների	x			0.0	
Այլ հարկեր (նշել տեսակը)	x			0.0	
-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝	**4823**	***0.0***	***0.0***	***0.0***	
նշել ըստ տեսակների				0.0	
նշել ըստ տեսակների				0.0	
նշել ըստ տեսակների				0.0	
Դ3.2.2.Համայնքների բյուջեներ		0.0	0.0	0.0	
-Հարկեր ընդամենը, այդ թվում՝	**4822**	***0.0***	***0.0***	***0.0***	
Գույքահարկ	x			0.0	
նշել ըստ տեսակների	x			0.0	
նշել ըստ տեսակների	x			0.0	
-Պարտադիր վճարներ, ընդամենը, այդ թվում՝	**4823**	***0.0***	***0.0***	***0.0***	
նշել ըստ տեսակների	x			0.0	
նշել ըստ տեսակների	x			0.0	
նշել ըստ տեսակների	x			0.0	
Դ3.3 Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	**x**	**0.0**	**0.0**	**0.0**	
-Դատարանների կողմից նշանակված տույժեր և տուգանքներ	**4831**			0.0	
Դ3.4. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	**4861**	**0.0**	**0.0**	**0.0**	
նշել ըստ տեսակների	x			0.0	
նշել ըստ տեսակների	x			0.0	

1	2	3	4	5=3-4	6
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Նշել ըստ տեսակների	x			0.0	
Ե. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ (տող9 -տող9)		**0.0**	**(6643.5)**	**6643.5**	
Զ. ԶՈՒՏ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻՑ (տող Զ2 - տող Զ1)		**0.0**	**0.0**	**0.0**	
Զ1.Կապիտալ ակտիվների ձեռքբերում այդ թվում՝	x	**0.0**	**0.0**	**0.0**	
Զ1.1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	**0.0**	**0.0**	**0.0**	
-Շենքերի և շինությունների ձեռք բերում	5111			0.0	
-Շենքերի և շինությունների կառուցում	5112			0.0	
-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113			0.0	
-Տրանսպորտային սարքավորումներ	5121	0.0	0.0	0.0	
-Վարչական սարքավորումներ	5122			0.0	
-Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129			0.0	
-Աճեցվող ակտիվներ	5131			0.0	
-Ոչ նյութական հիմնական միջոցներ	5132			0.0	
-Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր	5133			0.0	
-Նախագծանախահաշվային աշխատանքներ	5134			0.0	
Զ1.2. ՈՉ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	x	**0.0**	**0.0**	**0.0**	
-Հող	5411			0.0	
-Ընդերքային ակտիվներ	5421			0.0	
-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ	5431			0.0	
-Ոչ նյութական ոչ արտադրական ակտիվներ	5441			0.0	
Զ2.Կապիտալ ակտիվների վաճառքից մուտքեր	x			**0.0**	
Է. ԸՆԴԱՄԵՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՎԵԼՈՒՐԴ (ՊԱԿԱՍՈՒՐԴ) (տող Ե + տող Զ)	x	**0.0**	**(6643.5)**	**6643.5**	

Տնօրենի ժ/պ _____ Ա. Խլոյան
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ _____ Հ.Հարությունյան
(ստորագրություն)

2021թ.

ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտության, մշտադիտարկման, զբոսաշրջության բաժնի 2021 թվականի երկրորդ եռամսյակի աշխատանքների

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԴԱՊ-ի կենսաբազմազանության բազայի տվյալների, շարունակական հավաքագրման / թարմացման աշխատանքներ /

Կենսաբազմազանության տվյալների բազայում բույսերի տեսակային կազմի և դրանց աճելավայրերի գրանցման նպատակով 2021 թվականի երկրորդ եռամսյակում տեղաամաս - մասնաճյուղերում իրականացվել են շրջայցեր և հավաքագրվել են նյութեր: Բազայում կենդանիների վերաբերյալ տվյալները գրանցվել են տեղամաս - մասնաճյուղում տեղադրված ֆոտոթակարդների ֆիքսած լուսանկարների, տեսանկարահանումների վերլուծության, ինչպես նաև կենդանիների հետքերի վերաբերյալ աշխատակիցների կողմից հավաքագրված տվյալների համաձայն:

Բազայում 2021 թվականին գրանցվել են թվով 156 բուսատեսակ, որից երկրորդ եռամսյակի ընթացքում՝ 151 անուն բուսատեսակ, որոնց մեջ կան բույսեր՝ ենթատեսակներով: Կենդանիներ բաժնում գրանցվել է 129 կենդանի, որից երկրորդ եռամսյակի ընթացքում՝ 116 կենդանի, որոնք պատկանում են հետևյալ ընտանիքների.

- Եղջերուներ՝ այծյամներ
- Վայրի խոզ
- Արջեր
- Շնազգիներ՝ աղվեսներ, գայլեր, շնագայլեր
- Կատվազգիներ՝ անտառային կատու
- Նապաստակակերպեր՝ շեկ նապաստակ
- Կզաքիսազգիներ՝ աքիս
- Կրծողներ ՝ սկյուռ

ԴԱՊ-ի տարածքում ինվանզիվ բուսատեսակների հնարավոր արեալների հայտնաբերում և մոնիթորինգ

«Դիլիջան» ազգային պարկում օտարածին՝ ինվազիվ բուսատեսակների տեսակային կազմի, կենսաէկոլոգիական առանձնահատկությունների, տարածվածության, զբաղեցրած արեալների ինչպես նաև բնական էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա դրանց ազդեցության վերաբերյալ մոնիթորինգի նպատակով, իրականացվել են դիտայցեր: Բոլոր տեղամաս – մասնաճյուղերում՝ անտառամիջյան ճանապարհների հարակից հատվածներում, փոքր թվաքանակով տարածված են տատասկ ալեհեր (Cirsium incanum), տատասկ դաշտային (Cirsium arvense), գալինսոգա մանրածաղիկ (Galinsoga parviflora) տեսակները, որոնք ազգային պարկի համար համարվում են ինվազիվ տեսակներ:

«Դիլիջան» ազգային պարկի տարածքին բնորոշ ՀՀ բույսերի «Կարմիր» գրքում գրանցված բուսատեսակների աճելավայրերի և զբաղեցրած արեալների ուսումնասիրություն

ՀՀ բույսերի «Կարմիր» գրքում գրանցված և ԴԱՊ-ի տարածքում աճող բույսերի պոպուլյացաների, զբաղեցրած արեալների, տեսակային առանձնահատկությունների և դրանց տարածվածության վերաբերյալ ուսումնասիրության իրականացման նպատակով տեղադրված հինգ փորձահրապարակներում կատարվել է մշտադիտարկում, հավաքագրվել են տվյալներ վերոնշյալ տեսակների և վերջիններիս զուգահեռ աճող տեսակների վերաբերյալ տեղեկատվություն:

«Դիլիջան» ազգային պարկի տարածքին բնորոշ և ՀՀ կենդանիների «Կարմիր» գրքում գրանցված կենդանիների ուսումնասիրություն

Ուսումնասիրության իրականացման համար ընտրված թիրախային երեք կենդանատեսակների տարածվածության, պոպուլյացիաների և տեղաշարժի դիտարկման նպատակով տեղադրվել են ֆոտոթակարդներ, ինչպես նաև տեսակների վերաբերյալ նյութեր են հավաքագրվել պահպանության բաժնի աշխատակիցների կողմից ներկայացված տվյալների համաձայն: Ըստ հավաքագրված տվյալների արջերը և վայրի խոզերը առավել հաճախ հանդիպում են Աղավնավանք և Գոշ տեղամաս – մասնաճյուղերում: Հնդկական վայրենակերպը այս ժամանակահատվածում հանդիպել է Հաղարծին, Շամախյան և Աղավնավանք տեղամաս – մասնաճյուղերում:

- ✓ հնդկական վայրենակերպ կամ մացառախոզ (Hystrix leucura),
- ✓ գորշ արջ (Ursus arctos)
- ✓ վայրի խոզ (Sus scrofa)

«Դիլիջան» ազգային պարկի «Կովկասյան ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն»-ի վերաբերյալ տվյալների հավաքագրում

Դիտայցեր են իրականացվել «Կովկասյան ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոն»՝ եղջերուների մոտ կենսաֆիզոլոգիական փոփոխությունների, արտաքին կառուցվածքի (մազածածկույթի փոփոխության, եղջյուրների փոխարինման), ինչպես նաև վերարտադրության վերաբերյալ տվյալների հավաքագրման նպատակով: Մայիսից-հունիսն

ընկած ժամանակահատվածում կենտրոնում ծնվել է 8 ձագ: Արու առանձնյակների ոսկրացած եղջյուրները ընկել են, ձևավորվել են նորերը: Նոր եղջյուրներն այս ժամանակահատվածում փափուկ են, պարունակում են մեծ թվով արյունատար անոթներ և վրայից պատված են թավշյա ծածկույթով:

«Դիլիջան» ազգային պարկի տարածքին բնորոշ սնկատեսակների ուսումնասիրություն

Ըստ կառավարման պլանի տվյալների առանձնացվել են ուտելի և թունավոր սնկատեսակների անվանումներ: Դրանց պոպուլյացաների, տարածվածության, տեսակային առանձնահատկությունների վերաբերյալ նույնպես իրականացվում է տվյալների հավաքագրում դիտայցերի ընթացքում: Կան տեսակներ որոնց վերաբերյալ տվյալների հավաքագրումը հնարավոր է միայն տեսակի աճին և զարգացմանը բնորոշ սեզոններին:

ԴԱՊ-ի սնկատեսակների վերաբերյալ գրքույկի տպագրման համար հավաքագրվել է նախնական նյութ, որը նպատակաուղղված է հասարակության շրջանակներում իրազեկվածության բարձրացմանը, սնկերի որակային առանձնահատկությունների տարբերակմանը, սունկ հավաքելու կանոնների հետ ծանոթացմանը: Տպագրվելիք գրքույկը կծառայի նաև որպես դաշտային ուղեցույց:

Արտադրական պրակտիկա և ավարտական աշխատանքներ «Դիլիջան» ազգային պարկում

Հայաստանի Ազգային Ագրարային համալսարանի հեռակա ուսուցման «Ագրոնոմիկա» ֆակուլտետի, Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողի արտադրական պրակտիկան անց է կացվել «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ում: Պրակտիկայի շրջանակներում ուսանողը ծանոթացել է ԴԱՊ-ի գործունեությանը, կենսաբազմազանությանը, տեսակային առանձնահատկություններին, ծառերի տարիքաչափի միջոցով հաշվարկել է տարածքին բնորոշ ծառաբույսերից որոշ տեսակների տարիքը, ինչպես նաև ծանոթացել է եղջերուների կենտրոնի գործունեությանը: Համալսարանի կողմից ներկայացված ձևաչափին համապատասխան, ԴԱՊ-ի կողմից լրացվել և բուհ է ուղարկվել պրակտիկայի գնահատման թերթիկը:

Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև կնքված փոխըմբռնման հուշագրի շրջանակներում բնական գիտությունների ֆակուլտետի «Կենսաբանություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհին՝ «Դիլիջան ազգային պարկի այծամները» խորագրով, ավարտական աշխատանքի կատրման շրջանակներում այցելել է ԴԱՊ, մասնակցել է դիտայցերին և ֆոտոթակարդների տեղադրման աշխատանքերին:

Գիտական, կրթական, ճանաչողական արշավներ

Քաղցրաշենի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտների և Դիլիջանի թիվ 4 հիմնական դպրոցի 7-րդ դասարանի աշակերտների համար կազմակերպվել են արշավներ դեպի «Թաքնված ջրվեժ»-ի արահետ: «Հաղարծին տեղամաս» մասնաճյուղում աշակերտների հետ ուսումնասիրվել են «Դիլիջան» ազգային պարկի տարածքում հանդիպող որոշ դեղաբույսեր, ուտելի բուսատեսակներ, ՀՀ բույսերի Կարմիր Գրքում ներառված տեսակներ: Աշակերտներին առավել հետաքրքրած տեսակներից հավաքվել են հերբարիումային նմուշներ, հերբարիումների պատրաստման նպատակով: Տեղում ուսումնասիրվել և որոշվել է գետի ջրի որակը ըստ աբիոտիկ գործոնների (գետի արագություն, ջրի պարզություն, ջրի ջերմաստիճան, գետի կենդանական աշխարհ...): Աշակերտները ծանոթացել են ֆոտոթակարդների աշխատանքին և տեղադրման գործընթացին:

Gastronomic Camp Armenia–ի կողմից իրականացվող GastroCampTavush 2021 նախագծի մասնակիցների համար «Դիլիջան» ազգային պարկի աշխատակիցների կողմից կազմակերպվել է տուր դեպի Գոշ լիճ: Տեղում ծանոթացել են ազգային պարկի ուտելի, դեղատու և թեյատու բուսատեսակներին, էկոտուրիստական հնարավորություններին, ինչպես նաև կազմակերպվել է թեյախմություն:

Համագործակցություն հանդիպում – քննարկումներ

«Կենսաբանների հայկական միություն» ՀԿ-ի «Կամավորություն հանուն բնության», ծրագրի շրջանակներում, կազմակերպված հանդիպում – քննարկման ժամանակ աշխատակիցների կողմից ներկայացվել է ԴԱՊ-ի կենսաբազմազանությունը, էկոտուրիստական հնարավորությունները, ինչպես նաև ընդհանրական տեղեկատվություն տրամադրվել ազգային պարկի և նրա գործունեության մասին: Հանդիպում – քննարկմանը

մասնակցում էին ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան, Շրջակա միջավայրի նախարարության, կամավորների հավաքագրմամբ և էկոտուրիզմով զբաղվող կազմակերպությունների և բնապահպանական այլ կառույցների ներկայացուցիչներ;

Միջոցառման երկրորդ հատվածում իրականացվել է այց դեպի «Կովկասյան ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն»: Վերջում «Երկրի օրվա» առթիվ իրականացվել է ծառատունկ՝ տնկվել է սոճի և կաղնի ծառատեսակների շուրջ 80 տնկիներ:

Շրջակա միջավայրի նախարարության համակարգմամբ և Չեխիայի Հանրապետության ու Ֆինլանդիայի կոնսորցիումի կողմից իրականացվող «Հայաստանում կենսաբազմազանության ուժեղացված պահպանությունն ու կայուն օգտագործումը եվրոպական չափանիշներին համապատասխան» Թվինինգ ծրագրի շրջանակներում տեղի է ունեցել հանդիպում ազգային պարկի աշխատակիցների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել է կենսաբազմազանության պահպանությանն ուղղված գերակա խնդիրների, դրանց լուծմանն ուղղված քայլերի, մասնագիտական վերապատրաստումների, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ուղղություններում հնարավոր համագործակցության հեռանկարները: Հյուրերին ներկայացվել է ազգային պարկի կենսաբազմազանությունը և բուսական աշխարհի հերբարիումային ցուցանմուշները:

«Դիլիջան» ազգային պարկի աշխատակիցները մասնկցել են գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (գէհ) կողմից իրականացվող «կովկասի տարածաշրջանում անտառի գլոբալ մոնիթորինգի արդիականացում» տարածաշրջանային ծրագրի տեխնիկական աշխատանքային խմբի վեցերորդ հանդիպմանը:

«Կովկասի տարածաշրջանում անտառի գլոբալ մոնիտորինգի արդիականացում» տարածաշրջանային ծրագրի նպատակն է որոշում կայացնողների և քաղաքացիական հասարակության համար հասանելի դարձնել այն տեխնոլոգիաները և տեղեկատվության հավաքագրման գործիքները, որոնք կօգնեն նվազեցնել անտառահատումները, կնպաստեն անտառային կենսաբազմազանության պահպանությանը և վերարտադրությանը զարգացնելով օգտատուների համար նորարարական մոտեցումներ, դյուրացնելով տեղեկատվության և վերլուծությունների ներկայացումը: Հանդիպման շրջանակներում ներկայացվել են ներքոնշյալ թեմաները .

- ✓ Գետերի երկայնքով ափամերձ բուֆերային գոտիների վերականգնման վերլուծություն՝ Սևանա լճի օրինակով- քննարկման արդյունքների ներկայացում:
- ✓ Գետերի երկայնքով բուֆերային գոտիների վերականգնման հնարավորությունները:
- ✓ «Գետերի երկայնքով ափամերձ բուֆերային գոտիների քարտեզագրման արդյուքների քննարկում:

«Դիլիջան» ազգային պարկի աշխատակիցները հունիսի 9-10-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել են Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն հիմնադրամի և Կանաչ Ժամանակաշրջան ՀԿ-ի՝ Եվրամիության կողմից ֆինանսավորվող BSB 884 «Շրջակա միջավայրի պահպանման վերաբերյալ համատեղ մոնիթորինգային ծրագրի շրջանակներում», կազմակերպված փորձագիտական վերապատրաստմանը: Վերապատրաստման ավարտին ԴԱՊ-ի աշխատակիցները ստացան մասնակցության հավաստագրեր:

«Երիտասարդները հանուն փոփոխության» կրթական ծրագրի շրջանակներում, «Դիլիջան» ազգային պարկի և «Տրանսկովկասյան Արահետ» ՀԿ-ի ներկայացուցիչների միջև տեղի է ունեցել հանդիպում – քննարկում, հետագա համագործակցության, ազգային

պարկի տարածքում էկոտուրիզմի և էկոտուրիստական ենթակառուցվածքների զարգացման և կատարելագործման նպատակով:

«Երիտասարդները հանուն փոփոխության» կրթական ծրագրի շրջանակներում, «Արահետներ հանուն փոփոխության» ՀԿ -ի անդամները հյուրընկալվել էին «Դիլիջան» ազգային պարկի այցելուների կենտրոնում: Քննարկումների, հարց ու պատասխանի միջոցով գիտական բաժնի աշխատակիցները ներկայացրել են ազգային պարկի կենսաբազմազանությունը, գործունեությունը, ծրագրերն ու տուրիզմի զարգացման ուղղությունները:

Զբոսաշրջային ծառայությունների մատուցում

- Ընթացիկ վիճակի դիտարկման նպատակով շրջայցեր են իրականացվել դեպի «Միջնադարյան վանքերի», «Ապակեքարի», «Թաքնված ջրվեժ», «Շշնջացող ջրվեժ», «Կարասի ջրվեժ» և «Պարզ լճի շրջանաձև» արահետներ:
- 2021 թվականի ընթացքում այցելուների կենտրոն են այցելել 104 զբոսաշրջիկ, ովքեր ստացել են համապատասխան տեղեկատվություն ԴԱՊ-ի արահետների և առհասարակ էկոտուրիստական հնարավորությունների վերաբերյալ:
- «Կովկասյան ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն» են այցելել 3187 զբոսաշրջիկ, որից 2711 երկրորդ եռամսյակում: Զբոսաշրջային ծառայությունների մատուցման արդյունքում մուտքագրվել է 711.300 ՀՀ դարմ, որից 93. 000 ՀՀ դրամը (երկրորդ եռ. 75.000 դրամ)՝ ՝ հուշանվերների վաճառքից, իսկ 612.200 ՀՀ դրամը (երկրորդ եռ. 521.200 դրամ)՝ այցելուների մուտքավճարից, 6100 ՀՀ դրամը՝ թեյերի վաճառքից :
- Հաղարծին տեղամասում գտնվող հանգստի տաղավարների վարձավճարով տրամադրման արդյունքում մուտքագրվել է 121.000 ՀՀ դրամ:

Ընթացիկ աշխատանքների իրականացում

Սահմանված ժամկետում կատարվել է նախարարության և տնօրինության կողմից ստացված հանձնարարականները և հրամանները, պատասխանվել են գրություններին: Բաժնի աշխատակիցների կողմից տեղամաս - մասնաճյուղերում պարբերաբար իրականացվել են շրջայցեր, տեղադրվել են ֆոտոթակարդներ, կատարվել են տարածքների չափագրման աշխատանքներ:

ՈՒսումնասիրվել են կադաստրի վարման աշխատանքները, պատասխանվել են, տարածքների վերաբերյալ քաղաքացիների դիմումներին:

Գիտության, մշտադիտարկման և զբոսաշրջության

բաժնի պետ Ռ. Ալիխանյան

Կենսաբան Ա. Սաֆարյան

Զբոսաշրջության և մոնիթորինգի

մասնագետ Ն. Հովհաննիսյան

Կադաստրի վարման մասնագետ Հ. Քոչարյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի նախարարության

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի 2021 թվականի առաջին կիսամյակի աշխատանքային գործունեության

Պահպանության բաժին

Համաձայն կանոնադրության կազմակերպության գործունեության առարկան և նպատակը «Դիլիջան» ազգային պարկի տարածքում գտնվող բնական էկոհամակարգերի լանդշավտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրություն, պահպանություն, վերականգնման, վերարտադրության հաշվառման, գույքագրման, մոնիթորինգի ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է:

1. Ազգային պարկի ռեժիմի բնապահպանական խնդիրների հիմնական դրույթների մասին պարբերաբար սոցիալական ցանցերի միջոցներով տեղեկացվել է ազգաբնակչությանը:
2. Որսագողության, ապօրինի հատումների, արածեցումների, ապօրինի շինությունների, հողազավթումների և հրդեհների դեմ պայքարելու նպատակով քաղաքում և գյուղական համայնքներում ազգաբնակչության հետ կազմակերպվել են հանդիպումներ և ժողովներ:
3. Ազգային պարկի աշխատակիցների հետ անց են կացվել խորհրդակցություններ՝ անտառպահպանության աշխատանքները բարելավելու, անտառների բուսական և կենդանական աշխարհի պահպանությունը էլ ավելի արդյունավետ դարձնելու նպատակով:
4. Ազգային պարկի տարածքում առաջին կիսամյակի ընթացքում կազմվել են 34 անտառխախտման արձանագրություն՝ 198 թաց կանգուն ծառի ապօրինի հատման, 0.54 հա հողատարածքի ապօրինի զավթման և 5 խ.մ փայտանյութի ապօրինի դուրսբերման համար, որոնք ուղարկվել է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին, օրենքով սահմանված կարգով ընթացք տալու համար:

Պահպանության բաժնի պետ Ա. Սարդարյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<<01>> փետրվարի 2021թվականին Կնքված
N ՇՄՆ-ԴՇ-21/04 պայմանագրի
<<Դիլիջան>> ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարում>>
ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումների մասին 2021թ 1-ին կիսամյակի

NN h/h	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1.	**«Դիլիջան» ԱՊ պահպանություն**	-Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բամազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության պահպանություն /պաշտպանություն ազգային պարկի ամբողջ տարածքում (33765 հա) Մարդու գործունեության հետևանքով ազգային պարկի բնական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում ազգային պարկի ամբողջ տարածքում (33765 հա) - Հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացում Համագործակցություն տեղական և ինքնակառավարման մարմինների հետ՝ ներգրավելով նրանց ազգային պարկի տարածքների պահպանության և հակահրդեհային միջոցառումների իրականացմանը - Հարող բնակավայրերի բնակչության շրջանում էկոլոգիական իրազեկություն, էկոդաստիարակութուն:	-Պահպանության միջոցառումների անցկացում՝ ազգային պարկի աշխատակիցների կողմից տարածքներում ստուգումների և շուրջօրյա հերթապահությունների միջոցով: - Հրդեհների կանխարգելում: - էկոլոգիական իրազեկության և էկոդաստիարակության նպատակով հարող բնակավայրերի բնակչության հետ հանդիպումների կազմակերպում :	-Պատշաճ պահպանության ապահովում, հանրության իրազեկության պատշաճ մակարդակի ապահովում,հաշվետվություններ, վերլուծություններ և քննարկումներ Կազմվել է՝ 2 հաշվետվություն 2 վերլուծություն **/Հաշվետու ժամանակահատվածում իրականացված միջոցառումները կից ներկայացված են պահպանության բաժնի հաշվետվության մեջ/:** - Հրդեհների կանխարգելում: -Դիլիջան համայնքի բնակչության համար կազմակերպվել է 2 քննարկում:	30.06.2021թ.	**70 212 119**

2.	**«Դիլիջան» ԱՊ գիտական ուսումնասիրություններ**	«Դիլիջան» ազգային պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության գենոֆոնդի, բնությանժառանգության ուսումնասիրություններ և շրջակա միջավայրի դիտանցի միջոցառումների իրականացում: Դիտական միջոցառումների հաշվետվությունների թիվը 1 (մեկ), ռեկրեացիոն միջոցառումների հաշվետվությունների թիվը 2 (երկու)	Ազգային պարկի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տվյալների ձեռք բերում, ուսումնասիրությունների իրականացում	Ազգային պարկի ֆլորայի և ֆաունայի վերաբերյալ տվյալների վերլուծությունների առկայություն **/ հաշվետու ժամանակահատվածում իրականացված միջոցառումները կից ներկայացված են գիտության, մշտադիտարկման և զբոսաշրջության բաժնի հաշվետվության մեջ/:**	30.06.2021թ.	**10 396 200**
	ԸՆԴԱՄԵՆԸ					**80 608 319**

Կատարող Հ.Հարությունյան

Տնօրենի ժ/պ Ա. Խլոյան